25.05.2020
345-45

ՀՀ Վարչապետի աշխատակազմի ղեկավար

պրն Էդուարդ Աղաջանյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

ՀՀ Կառավարությունը՝ ի դեմս Պարետատան, COVID19-ի կանխարգելման և արագ բացահայտման նպատակով, գործարկել է մարդկանց հեռախոսային զանգերը վերահսկող հատուկ ավտոմատացված համակարգ՝ մարդկանց տեղորոշման միջոցով նրանց հետ շփվածների շրջանակը պարզելու համար: Ըստ պաշտոնական տեղեկատվության՝ այն ստեղծվել է հայ կամավոր ծրագրավորողների կողմից և օգտագործվում է Կառավարության 298 որոշմամբ նախատեսված մարմինների կողմից՝ Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին օրենքով և որոշմամբ սահմանված նպատակներով:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, խնդրում ենք տրամադել հստակ տեղեկություն, թե որ ընկերության և/կամ անհատ(ներ)ի կողմից է մշակվել ՀՀ-ում կորոնավիրուսի տարածման դեմ պայքարի շրջանակում օրինական ճանապարհով հեռախոսային զարգերը վերահսկելու համար նախատեսված թվային ծրագիրը:

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Հարգանքով՝

ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան

Իզաբելլա Սարգսյան